ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սուրեն Մինասյանի՝ 2023թ. հուլիսի 31-ից մինչև օգոստոսի 11-ը ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Սուրեն Մինասյան, Միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ք. Վիեննա, Ավստրիայի Հանրապետություն, 2023թ. հուլիսի 31-ից մինչև օգոստոսի 11-ը

3. Հրավիրող կողմը՝

Արժույթի միջազգային հիմնադրամի Վիեննայի միացյալ ինստիտուտ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Մասնակցություն Արժույթի միջազգային հիմնադրամի Վիեննայի միացյալ ինստիտուտի կողմից կազմակերպվող «Ֆինանսական ծրագրավորում և քաղաքականություններ» դասընթացին, որի ուղղություններից մեկը Արժույթի միջազգային հիմնադրամի ծրագրային առաջարկի կազմումն էր: Դասընթացի արդյունքները կնպաստեն Արժույթի միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծրագրերի շուրջ աշխատանքների կատարման արդյունավետության բարձրացմանը:

5. Քննարկված թեմաները՝

Դասընթացի նպատակն էր ծանոթանալ մակրոտնտեսական անհավասարակշռություն-ների ախտորոշման, ինչպես նաև մակրոտնտեսական կայունությանը հասնելուն ու պահպանելունն ուղղված ճշգրտված քաղաքականության մշակման ասպեկտներին: Այն ներառել է տնտեսության չորս հիմնական հատվածների (իրական, հարկաբյուջետային, արտաքին և ֆինանսական) առանցքային տարրերը, և շեշտադրվել է այդ ոլորտների միջև փոխկապակցվածությունը՝ ներառելով ինչպես հաշվապահական, այնպես էլ վարքագծային հարաբերությունները:

Դասընթացն ունեցել է հետևյալ ուղղությունները.

- ֆինանսական ծրագրավորման մոտեցման և հարակից տեխնիկայի կիրառություն,
- տնտեսության տարբեր ոլորտների միջև փոխհարաբերությունների վերլուծություն,
- տնտեսության ներքին և արտաքին անհավասարակշռությունների բացահայտում,
- քաղաքականության միջոցառումների ազդեցությունը մակրոտնտեսական կայունության վրա,

- մակրոտնտեսական քաղաքականության նպատակները՝ կայունացում, աճ և ներառում:

Դասընթացն առավել պրակտիկ կազմակերպելու նպատակով իրականացվել են գործնական սեմինարներ՝ հիմնված Վրաստանի մասնավոր դեպքի ուսումնասիրության վրա: Գործնական սեմինարների ընթացքում կիրառվել են «MS Excel» էլեկտրոնային աղյուսակներ՝ ամրապնդելով վերջինիս գիտելիքները մասնակիցների շրջանում:

Դասընթացի շրջանակներում առանձին խմբերով մշակվել է նաև Արժույթի միջազգային հիմնադրամի «Stand-By Arrangement» ծրագրային առաջարկ Վրաստանի մասնավոր դեպքի համար՝ ներկայացնելով բարեփոխումների հիմնական կարիքներն ու ուղղությունները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացի շրջանակներում առանձին ելույթներ, որպես այդպիսին, նախատեսված չեն եղել: Դասընթացի ավարտին մասնակիցներն առանձին խմբերով ներկայացրել են տեսաշնորհանդես:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այցի շրջանակներում որոշումների ընդունում, պայմանավորվածությունների ձեռքբերում և փաստաթղթերի ստորագրում չեն նախատեսվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հաշվի առնելով դասընթացի կազմակերպման մակարդակն ու ուսումնասիրվող թեմաների կարևորությունը՝ առաջարկում եմ ապահովել ՖՆ բոլոր այն աշխատակիցների մասնակցությունը դասընթացին, որոնք ներգրավված են ֆինանսական քաղաքականությունների մշակման գործում և այդ ուղղությամբ համագործակցում են միջազգային ֆինանսական ինստիտուտների հետ:

Ստորագրությունը, ամսաթիվը՝

ՍՈՒՐԵՆ ՄԻՆԱՍՅԱՆ

16 օգոստոսի, 2023թ.